

ԵՀՀ գլխավոր տնօրեն Գևորգ Տեր-Գաբրիելյանի ելույթը «Հետևանքը՝ արտեֆակտ» ֆիլմի  
ցուցադրության և ցուցահանդեսի բացման ժամանակ

Երևան

8 փետրվարի, 2020 թ.

Տիկնայք և պարոնայք,

Հարգելի հյուրեր:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի անունից ողջունում եմ ձեզ այս աննախադեպ ծրագրի շնորհանդեսին: ԵՀՀ-ն տարիներ շարունակ հասցեագրում է խաղաղարարության կարիքը տարածաշրջանում: Մեզ աջակցել են մի շարք պետություններ, նաև այստեղ ներկա առաքելությունները: Վերջին տարիներին այդ աջակցությունը գալիս է Եվրոպական Միությունից՝ որպես միասնական կառույց, որը շահագրգռված է խաղաղության և կայունության հասնելու տարածաշրջանում: Շնորհակալ ենք բոլոր աջակիցներին:

Մեր գործընկերներն իրագործել են մի շարք նշանակալի նախագծեր: Դեռևս անցյալ տարվա ձմռանը ՆՓԱԿ-ում կայացավ Նելլի Շիշմանյանի և իր ադրբեջանցի գործընկերոջ լուսանկարների ցուցահանդեսը՝ Վրաստանում միմյանց հետ բարեկամաբար ապրող հայերի և ադրբեջանցիների կենցաղին նվիրված: Ազգային Ակադեմիայի հետ միասին, մենք հրապարակեցինք Լուսինե Խառատյանի առաջնորդած գիրքը Հայաստանում ադրբեջանական մշակույթի մասին: Երևանի Ֆիրդուս թաղամասի անցյալի բազմազգ և բազմակենցաղ կացութաձևը ներկայացվեց նույպես տպավորիչ հրապարակմամբ: Շուտով գալու է մեկ այլ ունիկալ գործ՝ հայ և ադրբեջանական գրականությունների և երաժշտությունների համեմատությունը: Շատ կան նաև այլ նախագծեր, որ չեմ նշում այժմ:

Մեր գործունեությունը հասցեագրում է մի հակասություն, որը մեր հասարակությունները ժառանգել են չլուծված հակամարտության պատճառով, այն է՝ խաղաղարարության և հայրենասիրության միջև եղած թվացյալ հակասությունը: Սույն նախագիծը, որը շատ շուտով դիտելու եք, փայլուն է ցույց տալիս, որ դա շինծու և մտացածին հակասություն է:

Սա, ինչպես նաև մեր այլ նախագծեր, ներկայացվել են նաև Թբիլիսիում և Բրյուսելում, միջազգային հանրությանն ու հարևան երկրի մեր գործընկերներին: Եվ, իհարկե, այս և նման նախագծերը մեր հարաբերություններին հաղորդում են հումանիզմի այն լիցքը, որն անհրաժեշտ է քաղաքակիրթ հարաբերությունները վերականգնելու համար: Ստեփանակերտում այս նախագծի շնորհանդեսը, ինչպես և այսօրվա մեր ներկայությունը, նույնպես ցույց տվեց մեկ այլ հակասության հաղթահարում, այն է՝ հակասությունը քաղաքացիական հասարակության և իշխանության մոտեցումների միջև՝ դեպի այնպիսի դժվարին թեմաներ, ինչպիսին պատերազմն է և խաղաղությունը:

Այս ամենը հնարավոր չէր լինի, եթե չլինեին մեր տաղանդավոր գործընկերները: Չվախենալով սպոյլեր անել՝ կանխագուշակեմ միայն մեկ բան՝ ձեզ սպասող տպավորությունների վերաբերյալ.

դուք այժմ ապրելու եք մի ֆենոմեն, որն անկարելի է նկարագրել այլ կերպ, քան դասական կատարսիս՝ իր անտիկ իմաստով:

Մեզանում շատ են հուզականություն առաջացնող նախագծերը, որոնք, սակայն, միայն հուզականությունն են շեշտադրում և հավելյալ իմաստ չեն կրում: Շատ են նաև պոստմոդեռնիստական և այլ այն ծրագրերը, որոնք, հետևելով Բերտոլդ Բրեխտին, հայտարարում են, որ կատարսիսը հնացած երևույթ է, և, ընդհակառակը, պետք է օտարացած հայացք, որպեսզի հանրությունը դրդվի դեպ գործողություն:

Այս նախագիծը, ֆիլմը, ցուցահանդեսը դիտելու արդյունքում, համոզված եմ, արդեն բազմիցս համոզվել եմ, մասնակիցն ապրելու է դասական կատարսիս, այսինքն, հուզականության և էմոցիաների ալիքից հետո՝ նրա հոգին մաքրվելու է, և դա է և՛ իսկական ստեղծագործության, և՛ խաղաղարարության չկեղծված իմաստը, որը կերտվել է շնորհիվ մեր դյուցազունների տաղանդի և աշխատասիրության:

Եթե մեկնումեկդ կատարսիս չապրեց՝ խնդրեմ ինձ իմաց տվեք:

Շնորհակալություն և բարի դիտում: